ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 օգոստոսի 2013թ. թիվ 137-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի ԹԻՎ 7-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հունիսի 2-ի «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 774-Ն որոշման 5-րդ կետը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը նոր խմբագրությամբ և ՀՀ Լոռու մարզպետի 2003թ. փետրվարի 4-ի թիվ 7-Ա որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լ.Հարությունյանին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Ստեփանավանի տարածքային բաժին՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. օգոստոսի 2
ք.Վանաձոր